

Լիվոնոյի կաթողիկէ Հայոց եկեղեցւոյ Գիււանին մէջ: Սոյն նամակներն, որ Հռոմ գրուած են, բախտ ունեցայ անձամբ քննելու: Ասոնց վրայ կայ կնիք մը, որուն ընթերցուածն է՝ ՅԻ ՔԻ ԾՌ ՅՈՎԱԿԻՄ ՎՐԴՊՏ ՌՃԽԵ (= 1696), որ Արքեպս. ձեռնագրութեան տարին է եւ կրնայ իբր 1666ին ծնած համարուիլ. կը ստորագրէ «Յովակիմ Արքեպ. Զուղայեցի»: Այս նամակներն ուղղուած են Հռոմէն ի Լիվոնոյ առ Aslan di Jacob, որ փեսայն էր այն նշանաւոր Աղա տի Մաթուսի, որ 1699—1709 շինեց Լիվոնոյի կաթողիկէ Հայոց եկեղեցին Ս. Ժողովոյ հրամանին եւ կարգադրութեանց համեմատ, եւ 1709ին իր չարագործ ծառայէն սպանուեցաւ: Աղա տի Մաթուսի մասին Ս. Ռոշքա իր Ժամանակագրութեան մէջ կը գրէ.

“1698 Մատթէոս Թավրեղցի Աղայն մեծատուն այր եւ անուանի, յայսմ ամի եկեալ ի Հռոմ, զպատուական ընծայս մատոյց Սրբազան փափին Իննօշէնցիոսի ԺԲ. ին, այս է զխալի մի մեծ ապրշմեայ ոսկեթել, զճրագարանս երկու գահրեպարեայս, եւ զերկու բիւրեղէն բաժակս ի պատուական ականց զոտս ունելով: Շատ աշխատեցաւ, մինչեւ ընկալաւ ի Ս. Ժողովոյն վասն շինելոյ զնոր եկեղեցի Հայոց յԱլիկոնայ զԷշխանութիւն. զի Ս. Ժողովն կամէր, զՋատիկն որպէս ի Հռոմ, միշտ ի միասին եւ յԱլիկոնայ առնէին Հայք: Բայց յետոյ թոյլ ետ մնալ ըստ հին Տօմարին, աշխատելով առ այս եւ մեր Աստուածատուր Վ. Ներսիսեան Եպիսկոպոսն Տրայիանուպօլսի: տ. 1702”